

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հուլիսի 7-ի ՀՕ-79 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի աղյուսակի ԱՏԳ ԱԱ 2203, 2204, 2205, 2206, 2207 եւ 2208 ծածկագրերին վերաբերող տողերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

2203	Փարեջուր	տեղական արտադրության դեպքում՝ բացթողնման գին (առանց ավելացված արժեքի հարկի եւ ակցիզային հարկի) կամ 1 լիտր ներմուծման դեպքում՝ մաքսային արժեք կամ 1 լիտր	30 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 105 դրամ
2204	խաղողի գինիներ	տեղական արտադրության դեպքում՝ բացթողնման գին (առանց ավելացված արժեքի հարկի եւ ակցիզային հարկի) կամ 1 լիտր ներմուծման դեպքում՝ մաքսային արժեք կամ 1 լիտր	10 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 100 դրամ
2205	վերմուտ եւ խաղողի այլ գինիներ, որոնք պարունակում են բուսական եւ արոմատիկ էքստրակտներ	տեղական արտադրության դեպքում՝ բացթողնման գին (առանց ավելացված արժեքի հարկի եւ ակցիզային հարկի) կամ 1 լիտր ներմուծման դեպքում՝ մաքսային արժեք կամ 1 լիտր	50 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 750 դրամ
2206	խմորման ենթարկված այլ ըմպելիքներ (խնձորի սիդր, պերրու (տանձի սիդր), մեղրաըմպելիք), բացառությամբ պտղային և հատապտղային գինեւորի	տեղական արտադրության դեպքում՝ բացթողնման գին (առանց ավելացված արժեքի հարկի եւ ակցիզային հարկի) կամ 1 լիտր ներմուծման դեպքում՝ մաքսային արժեք կամ 1 լիտր	25 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 270 դրամ
2207	էթիլային սպիրտ	տեղական արտադրության դեպքում՝ բացթողնման գին (առանց ավելացված արժեքի հարկի եւ ակցիզային հարկի) կամ 1 լիտր (100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)	50 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 900 դրամ

		ներմուծման դեպքում՝ մաքսային արժեք կամ 1 լիտր (100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)	
2208	սպիրտային խմիչքներ	տեղական արտադրության դեպքում՝ բացթողնման գին (առանց ավելացված արժեքի հարկի եւ ակցիզային հարկի) կամ 1 լիտր ներմուծման դեպքում՝ մաքսային արժեք կամ 1 լիտր	50 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 500 դրամ

2) 1-ին մասի աղյուղակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

271019810	Շարժիչային յուղեր	Տեղական արտադրության դեպքում՝ բացթողնման գին (առանց ավելացված արժեքի հարկի եւ ակցիզային հարկի) կամ 1 կգ ներմուծման դեպքում՝ մաքսային արժեք կամ 1 կգ	10 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 կգ-ի համար 400 դրամ
8703 բացառությամբ 8703 10, 8703 21 101, 8703 21 901, 8703 22 101, 8703 22 901, 8703 23 199, 8703 23 909, 8703 24 101, 8703 24 901, 8703 31 101, 8703 31 901, 8703 32 191, 8703 32 901, 8703 33 191, 8703 33 901, 8703 90 10 և 8703 90 901-ի	25.0 մլն. դրամ և ավելի մաքսային արժեք ունեցող կամ մինչև 2 տարին ներառյալ թողարկման տարեթիվ և 4500 սմ ³ և ավելի շարժիչի աշխատանքային ծավալ ունեցող թեթև մարդատար ավտոմեքենաներ	ներմուծման դեպքում՝ մաքսային արժեք	20 տոկոս

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի առաջին նախադասության «դեպքերի» բառից հետո լրացնել «, ինչպես նաև սիգարների կամ մինչև 25000 շիշ ալկոհոլային խմիչքների ներմուծման դեպքերի, որոնց դեպքում դրոշմավորումը կարող է իրականացվել Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքում՝ մինչև մաքսային ձևակերպումների իրականացումը՝ մաքսային հսկողության ներքո» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:

Ամփոփաթերթ

2012 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող հարկային և հարակից օրենսդրության փոփոխություններ նախատեսող օրենսդրական նախագծերի փաթեթում ներառված՝ «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների և ՀՀ կառավարության կողմից ներկայացված առաջարկությունների վերաբերյալ

Առաջարկության հեղինակը	Ներկայացված առաջարկության բովանդակությունը	Հիմնավորումներ	Եզրակացություն
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Լարիսա Ալավերդյան	1. Առաջարկվում է թեթև մարդատար ավտոմեքենաների ներմուծման համար նախագծով առաջարկվող ակցիզային հարկի դրույթաչափերը առավել տարբերակել: Մասնավորապես, առաջարկվում է սահմանել ակցիզային հարկի հետևյալ դրույթաչափեր՝ ա) 15 մլն. դրամից մինչև 25 մլն. դրամ մաքսային արժեք ունեցող թեթև մարդատար ավտոմեքենաների համար՝ մաքսային արժեքի 10 տոկոս, բ) 25 մլն. դրամից մինչև 35 մլն. դրամ մաքսային արժեք ունեցող թեթև մարդատար ավտոմեքենաների համար՝ մաքսային արժեքի 15 տոկոս, գ) 35 մլն. դրամից մինչև 50 մլն. դրամ մաքսային արժեք ունեցող թեթև մարդատար ավտոմեքենաների համար՝ մաքսային արժեքի 20 տոկոս, դ) 50 մլն. դրամից ավել մաքսային արժեք ունեցող թեթև մարդատար ավտոմեքենաներ համար՝ մաքսային արժեքի 30 տոկոս:		Մաքսային արժեքների մի քանի միջակայքերի առկայությունը ենթադրում է վարչարարության բարդացում և մեծացում պարտավորությունների արհեստական նվազեցման հնարավորությունները: Միաժամանակ մաքսային արժեքի նվազեցման առումով առաջարկությունը ընդունվել է և ավտոմեքենաների ակցիզային հարկով հարկելու համար առաջարկվող արժեքային շեմը՝ 30 մլն դրամից սահմանվել է 25 միլիոն դրամ:
	2. Առաջարկվում է ավտոմեքենաների համար սահմանված ակցիզային հարկին վերաբերող դրույթներից հանել մեքենայի շարժիչի աշխատանքային ծավալին վերաբերող դրույթները:		Չի ընդունվել, քանի որ շքեղության հիմնական հատկանիշներից մեկը շարժիչի հարաբերականորեն մեծ աշխատանքային ծավալն է:
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Գրիգոր Մարգարյան	Առաջարկվել է 4000 սմ ³ աշխատանքային ծավալով շարժիչների փոխարեն հարկել 4500 սմ ³ և բարձր ծավալով շարժիչներ ունեցող ավտոմեքենաները		Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով հաստատվող աղյուսակի ԱՏԳ ԱԱ 2206 ծածկագրին 2-րդ սյունակում ավելացնել «բացառությամբ պտղային և հատապտղային գինեղյութի» բառերը:	Առաջարկը խմբագրական բնույթ ունի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պտղային և հատապտղային գինեղյութը ներկայումս ևս չի հարկվում ակցիզային հարկով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացում: